# What is happiness
and where can it be found?

# Ի՞նչ է երջանկությունը
եւ
որտե՞ղ
կարելի է գտնել
այն

If you want to know the answer to these questions, this booklet will explain to you the four secrets to having a happy life.

Now get to know the first secret of happiness.

## 1 God loves you

**Know that God loves with an everlasting love. He wants you to have a relationship with Him so that you can have a joyful, happy life.**

**GOD'S LOVE**

God says: **"I have loved you with an everlasting love..."** (Jeremiah 31:3)

He showed His love to us.
**"God so loved the world that He gave His one and only Son, that whoever believes in Him shall not perish, but have eternal life."**
(John 3:16)

Եթե ուզում ես իմանալ այս հարցերի պատասխանները, ահա այս գրքույկը քեզ համար բացահայտում է չորս գաղտնիք երջանիկ կյանք ունենալու համար:

Այժմ ծանոթացիր երջանկության առաջին գաղտնիքին:

## 1 Աստված սիրում է քեզ

**Իմացիր, որ Աստված հավերժական սիրով սիրում է քեզ: Նա ցանկանում է, որպեսզի հաղորդակցվես Իր հետ և այդպիսով ունենաս ուրախ և երջանիկ կյանք:**

**Աստծո սերը**

Աստված ասում է.

***«Հավիտենական սիրով սիրեցի քեզ...» (Երեմ. 31: 3):***

*Նա Իր սերը հայտնեց մեզ.* ***«Աստված այնպես սիրեց աշխարհը, որ մինչև իսկ Իր միածին Որդուն տվեց, որպեսզի Նրան ամեն հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա»*** *(Հովհ. 3:16):*

**GOD'S PLAN**

God wants everyone to turn to Him and to have a spiritual relationship with Him, so that they can be worthy of God's compassion, and find peace and eternal life.

This is what Jesus says: **"Now this is eternal life: that they may know you, the only true God, and Jesus Christ, whom you have sent."** *(John 17:3)*

**"I have come that you might have life and have it abundantly."** ***(John 10:10)***

If people are lacking a valuable, perfect life, and if Jesus came to give that blessed life, then you might ask:

***Why don't I and most other people enjoy the abundant life?***

**To know the reason, you have got to know the second secret.**

**Ա ս տ ծ ո  ծ ր ա գ ի ր ը**

Աստված կամենում է, որ ամեն մարդ դառնա դեպի Իրեն, հոգևոր հաղորդակցություն ունենա Իր հետ, որպեսզի արժանանա Աստծո ողորմածությանը, գտնի խաղաղություն և հավիտենական կյանք:

Ահա թե Հիսուսն ինչ է ասում. ***«Եվ սա է հավիտենական կյանքը, որ ճանաչեն Քեզ միակ, ճշմարիտ Աստված. և Նրան, որ ուղարկեցիր՝ Հիսուսին Քրիստոսին»*** (Հովհ 17:3):

***«Ես եկա, որպեսզի [մարդիկ] կյանք ունենան և առավել ևս ունենան»*** (Հովհ 10:10):

Ուրեմն, եթե մարդ արարածը զուրկ է լիարժեք, կատարյալ կյանքից և, եթե Հիսուսը եկավ, որ շնորհի այդ երանելի կյանքը, ապա միգուցե հարցնես. ***«Ինչու՞ ես և մարդկանց մեծամասնությունը չենք վայելում այդ «առավել ևս» կյանքը»:***

Պատճառն իմանալու համար ծանոթացիր երկրորդ գաղտնիքին:

# 2 Man is a sinner

**By turning away from God's commandments, people have gone far from God and are not experiencing His blessed presence.**

**"… your iniquities have separated you from your God."** (Isaiah 59:2)

**WHAT IS SIN?**

The first humans, Adam and Eve, were created to communicate with God. They were incredibly happy in the Garden of Eden. Instead of following God's truth, however, they preferred to self-willingly listen to the deceitful words of Satan, and became sinners, that is, they disobeyed God's word.

Therefore, according to the Bible, disobeying God's will is called **SIN**. (Romans 1:18-21; Isaiah 53:5,6, 1John 5:17)

**WHO HAS SINNED?**

All human beings became sinners through the first humans, since they were their offspring. Like a contagious disease, sin, by the right of succession (hereditary) was transferred to all humans and seized them, and reached you and me. Thus, this is what the Word of God proclaims, ***"… all have sinned and fall short of the glory of God."*** *(Romans 3:23)*

# 2 Մարդը մեղավոր է

**Աստծո պատվիրաններից երես թեքելու պատճառով մարդը հեռացել է Աստծուց և զրկված է Նրա օրհնյալ ներկայությունից:**

*«…Ձեր մեղքերն են պատնեշ դարձել ձեր և Աստծո միջև» (Ես. 59:2):*

**Ի ՞ ն չ  է  մ ե ղ ք ը**

Առաջին մարդիկ՝ Ադամն ու Եվան ստեղծվել էին Աստծո հետ հաղորդակցվելու նպատակով: Նրանք աներևակայելիորեն երջանիկ էին Եդեմի պարտեզում, սակայն Աստծո ճշմարտության փոխարեն, ինքնակամորեն գերադասեցին լսել Սատանայի խաբեական խոսքը և մեղավոր դարձան, այսինքն անհնազանդ գտնվեցին Աստծո Խոսքին:

Ուրեմն, ըստ Աստվածաշնչի, Աստծո կամքին անհնազանդությունը կոչվում է **ՄԵՂ Ք** (Հռոմ. 1:18-21, Ես. 53:5,6, Ա Հովհ. 5:17):

**Ո ՞վ  է  մ ե ղ ա վ ո ր ը**

Առաջին մարդկանցով մեղավոր դարձան բոլոր մարդիկ, քանզի նրանց սերունդներն են: Մեղքը, վարակիչ հիվանդության պես ժառանգաբար փոխանցվելով, համակեց ողջ մարդկությանը և հասավ ինձ ու քեզ: Ուստի Աստծո Խոսքը հայտարարում է. ***« …բոլորն էլ մեղք գործեցին և զրկվեցին Աստծո փառքից»*** (Հռոմ. 3:23):

## THE CONSEQUENCE OF SIN

**“The wages of sin is death.” (Romans 6:23)**

Death means everlasting separation from God.

God is holy, but people are buried in sin. Therefore, an impassable chasm separates them.

People constantly try to get close to God by personal efforts, doing good things, virtuous lifestyle, philosophy, but he cannot be freed from the clutches of sin (lusts, evil desires and other thoughts rejected by God) and get across the chasm.




**What is the way out? Let us look at the third secret.**

## Մ ե ղ ք ի   հ ե տ և ա ն ք ը

*«Մեղքի վարձը մահն է»* (Հռոմ. 6:23):

Մահ նշանակում է հավիտենական բաժանում Աստծուց:

Աստված սուրբ է, իսկ մարդը՝ մեղքի մեջ թաղված: Ուստի անանցանելի անդունդ է բաժանում նրանց:

Մարդը շարունակ փորձում է Աստծուն մոտենալ սեփական ջանքերով՝ բարի գործերով, առաքինի ապրելակերպով, փիլիսոփայությամբ, սակայն չի կարողանում ազատվել մեղքերի (կրքեր, չար ցանկու-թյուններ և Աստծուց մերժված այլ խորհուրդ-ներ) ճիրաններից և անցնել անդունդը:




Ո՞րն է ելքը: Նայենք երրորդ գաղտնիքին:

# 3 Jesus is the Savior

| | | |
|---|---|---|
| Who is Jesus? | **Unique person** | **“He is the true God”** *(1 John 5:20)* |
| What did Jesus say? | **Unique claim** | **“... I am the way the truth and the life.”** (John 14:6) |
| What did Jesus do? | ***Unique sacrifice*** | ***“... for all of us...he died once, and Christ himself, the Righteous One, for the unrighteous, in order to draw us close to God.”*** (1 Peter 3:18) |
| What can Jesus do for you? | ***Unique salvation for you*** | ***“.. He is able to save completely those who come to God through Him”*** (Hebrews 7:25) |

# 3 Հիսուսն է միակ Փրկիչը

| | | |
|---|---|---|
| Ո՞վ է Հիսուսը | *Բացառիկ Անձնա-վորություն* | **«...Նա է ճշմարիտ Աստված»** Ա Հովհ. 5:20 |
| Ի՞նչ ասաց Հիսուսը | *Աննման հայտա-րարություն* | *«Ես եմ ճանապարհը և Ճշմարտությունը և Կյանքը»* Հովհ. 14:6 |
| Ի՞նչ արեց Հիսուսը | **Եզակի անձնա-զոհություն** | *«...մեր բոլորի համար... մեկ անգամ մեռավ և Ինքը Քրիստոս՝ Արդարը՝ անարդարների համար, որպեսզի մեզ մոտեցնի Աստծուն»* Ա Պետ. 3:18 |
| Ի՞նչ կարող է անել քեզ համար | *Անզուգական փրկություն* | *« ... բոլորովին կարող է փրկել. նրանց, որ Նրանով մոտենում են Աստծուն»* Եբր. 7:25 |

## JESUS IS THE SOLUTION

His wonderful birth, holy life, mighty miracles, death on the cross, victorious resurrection and ascension prove the fact that He is the only Savior of people.

Only He can save us from the deadly claws of sin and safely take us through the chasm that separates us from God.

## CHRIST IS THE ONLY WAY

**"Jesus said to him, 'I am the way and the truth and the life. No one comes to the Father but through me.'"** (John 14:6)

We were condemned to death because of sin. But God sent His Son, to die on the cross in our place. Thus he built a bridge over the gap which separates us from God.




**"This is how God showed His love toward us, that when we were yet sinners, Christ died for us" (Romans 5:8)**

With the help of this bridge, we can connect with God and receive the forgiveness of sins.

God's Word testifies:
**"Look, the Lamb of God, who takes away the sin of the world!" (John 1:29)**

However, just knowing this truth does not automatically guarantee your salvation.

**Now what else do you need to do?**

## Ելքը Հիսուս Քրիստոսն է

Նրա զարմանահրաշ ծնունդը, սուրբ կյանքը, զորավոր հրաշքները, մահը խաչի վրա, հաղթական հարությունը և համբարձումը ան-հերքելի փաստեր են, որ Նա է մարդկության միակ Փրկիչը:

Միայն Նա կարող է մարդուն փրկել մեղքի մահացու ճանկերից և ապահով անցկացնել Աստծուց բաժանող անդունդը:

## Քրիստոսն է միակ ճանապարհը

*Հիսուսը նրանց ասաց. «Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և կյանքը. ոչ ոք չի գա Հոր մոտ, եթե ոչ՝ Ինձանով» (Հովհ. 14:6):*

Մեղքի պատճառով մենք դատապարտված էինք մահվան: Սակայն Աստված Իր Որդի Հիսուս Քրիստոսին ուղարկեց խաչի վրա մեր փոխարեն մեռնելու, դրանով կամուրջ գցեց մեզ Իրենից բաժանող անդունդի վրա:




***«Աստված Իր սերը մեր հանդեպ հայտնեց նրանով, որ մինչդեռ մեղավոր էինք, Քրիստոս մեզ համար մեռավ»*** *(Հռոմ. 5:8):*

Այս կամուրջի միջոցով է, որ մոտենում ենք Աստծուն և մեղքերի թողություն գտնում:

Աստծո Խոսքը վկայում է. ***«Ահա Աստծո Գառը, որ վեր է առնում աշխարհի մեղքը»*** (Հովհ. 1:29):

Սակայն այս ճշմարտության լոկ իմացությունը ինքնին չի ապահովում քո փրկությունը:

**Ահա թե էլ ի՞նչ պետք է անես:**

# 4 Believe and accept Jesus

Christ invites:
“Come to me, all who labor and are heavy laden, and I will give you rest.”
(Matt. 11:28)

**IF YOU ACCEPT HIM AS YOUR PERSONAL LORD AND SAVIOR THEN:**

- You will know God.
- You will find forgiveness of sins
- You will enjoy God’s love.
- You will know His will for you.

**WE RECEIVE CHRIST BY FAITH**

In order to receive Christ you need to:

- Repent of the sins you have committed and confess them to God;
- Turn away from your old sinful life;
- Turn to God; and
- Trust Christ, believing that He has forgiven your sins, because He was sacrificed for you.

**FORGIVENESS**

Forgiveness of sin is a free gift of God.
**“It is by God’s grace that you have been saved, through faith [that is trusting Him]. It is not through your own effort. It is God’s gift.”** (Ephesians 2:8)

You get that gift as soon as you receive Christ.
**“Those who received Him, who believed in His name, He gave them authority to become God’s children.” (1 John 1:12)**

# 4 Հավատա եվ ընդունիր Հիսուսին

Քրիստոսը կանչում է.
«Ինձ մոտ եկեք, ամեն վաստակածներ և բեռնավորվածներ, և Ես հանգիստ կտամ ձեզ» (Մատթ. 11:28):

Եթե դու ընդունես Նրան, որպես քո անձնական Տերը և Փրկիչը, ապա՝

- *Կճանաչես Աստծուն,*
- *Կգտնես մեղքերի թողություն,*
- *Կվայելես Աստծո սերը,*
- *Կիմանաս Աստծո կամքը քեզ համար:*

**Ընդունիր Քրիստոսին հավատքով**

Որպեսզի ընդունես Քրիստոսին,անհրաժեշտ է.

- Զղջաս գործած մեղքերի համար և խոստովանես դրանք,
- Երես թեքես նախկին մեղավոր կյանքիցդ,
- Դարձի գաս, շրջվես Աստծո կողմը,
- Վստահես Քրիստոսին, հավատալով, որ Նա ներեց քո մեղքերը, որովհետև Ինքը զոհվեց քո փոխարեն:

**Ներում**

Մեղքերի թողությունը Աստծո ձրի պարգևն է. *«Աստծո շնորհով եք փրկված հավատքի միջոցով, և այս ձեզնից չէ, այլ պարգևն է Աստծո»* (Եփես. 2:8):

Այդ պարգևը կստանաս այն պահից, երբ ընդունես Քրիստոսին: *«Ովքեր ընդունեցին Նրան, Իր անունին հավատացողներին, Նա իշխանություն տվեց Աստծո որդիներ լինելու»* (ԱՅովհ. 1:12):

## DECISION: ACCEPT OR REJECT

God has prepared the way of salvation, but He has given you free will to accept or to reject His offer.

[Christ speaking] **“Behold, I stand at the door and knock; if anyone hears my voice and opens the door, I will come in to him.”** (Revelation 3:20)

However, just agreeing with His demands in your mind and with your feelings does not guarantee (secure) your salvation.

You must take a new step, solve the problem of your SELF and your Savior’s supremacy, which is represented by two lively, symbolic pictures of hearts.




**SELF-DIRECTED LIFE**

- **S –** Your personal Self on the throne of life.
- **● –** Your living and aspirations (interests), which you yourself direct, often result in discord and frustration.
- **† –** Christ is pushed outside your life.




**CHRIST-DIRECTED LIFE**

- **†** – Christ on the throne of your life.
- **S** – Self is yielding to Christ.
- **●** –Your interests are directed by the Almighty. As a result, life has been organised and has become peaceful and in harmony with God’s plan.

**Which heart represents your life?**
**Which heart would you like your life to agree with?**

**So read the direction for receiving Christ.**

## Ո ր ո շ ո ւ մ. ը ն դ ո ւ ն ե լ կ ա մ մ ե ր ժ ե լ

Աստված պատրաստել է փրկության ճամփան, սակայն քեզ ազատ կամք է տվել՝ ընդունելու կամ մերժելու Իր հրավերը:

***«Ահավասիկ Ես դռան առաջ եմ և բախում եմ. եթե մեկը ականջ դնի Իմ ձայնին և բաց անի դուռը, կմտնեմ նրա մոտ»,****- ասում է Քրիստոսը (Հայտ. 3:20):*

Սակայն լոկ մտքով ու զգացմունքնե-րով Նրա պահանջներին համաձայնելը դեռ չի ապահովում փրկությունդ:

Պետք է կատարես ևս մի նոր առաջընթաց քայլ՝ վճռես **ԵՍ**-իդ և Փրկչիդ գերակայության խնդիրը, որը ստորև ներկայացվում է երկու կենսակերպ խորհրդապատկերող սրտերով:




***Ի ն ք ն ա կ ա ռ ա վ ա ր վ ո ղ կ յ ա ն ք***

- **ԵՍ -** Սեփական անձդ կյանքի գահին.
- **● -** Քո ապրումներն ու ձգտումները, որոնք ղեկավարում ես դու ինքդ, ինչի հետևանքով խառնաշփոթությունն ու ձախորդությունը հաճախ անխուսափելի են:
- **† -** Քրիստոսը մղված կյանքից դուրս:




***Ք ր ի ս տ ո ս ո վ կ ա ռ ա վ ա ր վ ո ղ կ յ ա ն ք***

- **† -** Քրիստոսը կյանքիդ գահին:
- **ԵՍ -** Սեփական անձդ տեղը զիջել է Քրիստոսին:
- **● -** Քո ապրումները և ձմնտումները, որոնք ղեկավարում է Ամենակարողը: Այս բանի շնորհիվ կյանքը կարգավորվել է, դարձել ներդաշնակ և խաղաղ՝ Աստծո ծրագրին համապատասխան:

**Ո՞ր սիրտն է խորհրդանշում քո կյանքը:**
**Ո՞ր սրտին կկամենայիր համապատասխանեցնել կյանքդ:**

Ուրեմն կարդա Քրիստոսին ընդունելու կերպը:

**PRAY AND RECEIVE CHRIST RIGHT AWAY, LATER ON MAY BE TOO LATE**

Now you can invite Christ into your heart by faith through prayer. Do you know what prayer means?

- Prayer means talking to God.
- God knows your heart and He pays attention to your heart rather than your words.

Have you ever prayed?

If you haven't, you can follow the example of the following prayer.

**Now pray like this:**

**"Lord Jesus, I need You. Thank you for sacrificing your life on the cross to forgive my sins. Now I open the door of my heart. Enter and live there. Forgive me, a sinner. I receive you as my Savior and Lord. Take my whole life into your hands and direct it. Change me so that I can be pleasant to you. Thank You for forgiving my sins and pardoning me. Praise and honor to the Holy Trinity, to the Father, and to the Son, and to the Holy Spirit. Amen."**

Does this prayer express the desire of your heart? If it does, turn to God and repeat it.

**Աղոթիր եւ ընդունիր Քրիստոսին հենց հիմա, հետո կարող է ուշ լինել**

Այժմ դու կարող ես հավատքով աղոթել և Քրիստոսին հրավիրել քո սրտի մեջ: Գիտե՞ս արդյոք, թե ինչ է նշանակում աղոթք:

- Աղոթք՝ նշանակում է զրույց Աստծո հետ:
- Աստված գիտի քո սիրտը և ավելի սրտիդ է նայում, քան խոսքերիդ:

Իսկ դու երբևէ աղոթե՞լ ես:

Եթե չես աղոթել, կարող ես օգտագործել հետևյալ աղոթքի օրինակը:

**Իսկ հիմա աղոթիր այսպես.**

**«Տեր Հիսուս, ես Քո կարիքն ունեմ: Շնորհակալ եմ, որ իմ մեղքերի թողության համար անձդ զոհեցիր խաչի վրա: Ահա բացում եմ իմ սրտի դուռը. ներս մտիր և բնակվիր այնտեղ:Ներիր ինձ՝ մեղավորիս: Ես Քեզ ընդունում եմ որպես Փրկիչ և Տեր: Իմ ամբողջ կյանքը Քո ձեռքն առ և կառավարիր այն: Փոխիր ինձ, որպեսզի քեզ հաճելի լինեմ: Շնորհակալ եմ Քեզանից, քանի որ ներեցիր մեղքերս և թողություն տվեցիր ինձ: Փառք և երկրպագություն Սուրբ Երրորդությանը՝ Մեծ Աստծուն՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն: Ամեն»:**

Արդյոք այս աղոթքը հարազա՞տ էր քո սրտին: Եթե այդպես է, Աստծուն դիմելով, կրկնիր այն:

**HOW TO KNOW IF CHRIST IS IN YOUR LIFE.**

If you prayed sincerely, then believe that according to His promise, the Lord heard your prayer, forgave your sins and from now on He will dwell in your heart. (Rev. 3:20)

How can you be sure that God has answered your prayer? The guarantee is the assurance and assertion of His words. Therefore, if He has promised, He can do it too.

**THE RESULT OF ACCEPTING CHRIST**

The moment you accepted Christ:

1. Christ came into your life. (Rev. 3:20; Col. 1:27);
2. Your sins are forgiven. (Col.1:14);
3. You became a child of God. (John 1:12);
4. Your relationship with God was re-established. (John 5:24);
5. By being born again, you started the great work God had created you to do. (John 10:10; 2 Cor. 5:17; 1 Thess. 5:18)

**Ինչպես իմանալ, որ Քրիստոսը քո կյանքի մեջ է:**

Եթե սրտանց աղոթեցիր, հավատա, որ Տերը, Իր խոստման համաձայն, լսեց քո աղոթքը, ներեց քո մեղքերը և այսուհետ կբնակվի քո սրտում (Հայտ. 3:20):

Ինչը՞ կարող է վստահեցնել, որ Աստված պատասխանեց քո աղոթքին. Այս ամենի գրավականը Նրա խոսքերի հավաստիությունը և անբեկանելիությունն են: Ուստի, եթե Նա խոստացել է, կարող է և կատարել:

**Քրիստոսին ընդունելու արդյունքը**

Այն պահին, երբ ընդունեցիր Քրիստոսին.

1. Քրիստոսը մուտք գործեց քո կյանքի մեջ (Հայտ. 3:20, Կող. 1:27),
2. Քո մեղքերը ներվեցին (Կող. 1:14),
3. Դարձար Աստծո զավակ (Հովհ 1:12),
4. Վերականգնվեց քո և Աստծո հարաբերությունը (Հովհ. 5:24),
5. Վերածնվելով՝ սկսեցիր այն մեծ գործը, որի համար Աստված քեզ ստեղծել է (Հովհ. 10:10, Բ Կորնթ. 5:17, Ա Թես. 5:18):

**ETERNAL LIFE**

The Bible promises eternal life to all who accept Christ.

**“And this is the testimony: God has given us eternal life, and this life is in his Son. He who has the Son has life: he who does not have the Son of God does not have life.**

**I write these things to you who believe in the Son of God so that you may know that you have eternal life.” (1 John 5:11-13)**

Thank God that Christ, according to His promise, is living in your heart (Heb. 13:5). The Bible’s promises give assurance that you become an heir of eternal life from the moment when you receive Christ into your heart. And the Word of God is a undistorted truth.

Did you notice any changes take place in you? If not, then consider the following:

**Հ ա վ ի տ ե ն ա կ ա ն  կ յ ա ն ք**

Աստվածաշունչը հավիտենական կյանք է խոստանում բոլոր Քրիստոսին ընդունողներին:

***«Եվ վկայությունն այս է, որ Աստված մեզ հավիտենական կյանք տվեց, որ այդ կյանքը Նրա Որդու մեջ է: Նա, ով Որդուն ընդունել է, կյանք ունի, և նա, ով Որդուն չի ընդունել, կյանք չունի:***

***Այս բաները գրեցի ձեզ, որպեսզի իմանաք, թե հավիտենական կյանք ունեք դուք, որ Աստծո Որդու անվանն եք հավատում»*** *(Ա Հովհ. 5:11-13):*

Փառք տուր Աստծուն այն բանի համար, որ Քրիստոսը Իր խոստման համաձայն բնակություն է հաստատում քո սրտում և երբեք չի լքում (Եբր. 13:5): Աստվածաշնչյան խոստումները հավաստիացնում են, որ դու հավիտենական կյանքի ժառանգորդ ես դառնում հենց այն պահից, երբ ընդունում ես Քրիստոսին քո սրտում: Իսկ Աստծո Խոսքը անեղծ ճշմարտություն է:

Արդյոք քո մեջ որևէ փոփոխություն տեղի ունեցա՞վ: Եթե ոչ, ապա նայիր հաջորդ վերնագրին:

## DO NOT DEPEND ON FEELINGS

The anchor of faith is God's promises, not our emotions. The Christian lives by trusting God and His Word. This diagram illustrates the relationship between …

- **TRUTH** (God and His Word)
- **FAITH** (our trust in God and His Word)
- **FEELINGS** (the result of our faith and obedience). (John 14:21)




The vehicle can go with or without a trailer. But to think that a trailer can make the vehicle move is crazy. It is the same for Christians. We should not rely on our feelings or experiences. Instead, we should trust in the unchanging truth of the promises of God's Word.

**"Because we live according to our faith and not by what we see."** (2 Corinthians 5:7)

**Now what are you going to do after this?**

## Մի ապավինիր զգացողություններիդ

Հավատքի խարիսխը Աստծո խոստումներն են և ոչ թե մարդու զգացմունքները: Քրիստոնյան ապրում է Աստծուն և Նրա Խոսքին ապավինած: Ստորև ներկայացված պատկերը լուսաբանումէ.

- **ՓԱՍՏԻ** (Աստված և նրա խոսքը),
- **ՀԱՎԱՏՔԻ** (մեր վստահությունը Աստծո և Նրա խոսքի հանդեպ),
- **Զգացողությունների** (մեր հավատքի և հնազանդության արդյունքը), միջև եղած կապը (Հովհ. 14:21).




Բեռնատարը կարող է շարժվել և կցորդի առկայությամբ, և առանց դրա: Անշուշտ, անօգուտ և ապարդյուն կլինեին բեռնատարը կցորդի օգնությամբ շարժելու փորձերը: Ճիշտ նույն ձևով մենք, քրիստոնյաներս, չպետք է կախում ունենանք մեր զգացմունքներից կամ ապրումներից, այլ մեր հավատքը պետք է հաստատենք միայն Աստվածաշնչի խոստումների անփոփոխ ճշմարտության վրա: ***«Որովհետև հավատքով ենք ընթանում և ոչ թե երևույթով»*** (Բ Կորնթ. 5:7):

**Իսկ ի՞նչ ես անելու սրանից հետո.**

## SOME SUGGESTIONS FOR YOUR SPIRITUAL GROWTH

Spiritual maturity results from trusting Jesus Christ. **"Man shall live by faith."** (Gal. 3:11)

A life full of faith will teach you to trust God increasingly with every detail of your life and practice the following:

1. Go to God in prayer daily. (John 15:7);
2. To know Him deeply read God's Word daily. (Acts 17:11; 2 Timothy 3:14-17);
3. In everything obey God (John 14:21);
4. Witness for Christ by your life and words. (Matt. 4:19);
5. In every detail of your life trust God. (1 Peter 5:7);
6. Let the Holy Spirit fill you with His power, control your life and make you a witness for Christ. (Gal. 5:16; Acts 1:8);
7. Continuously have fellowship with believers.

## Մի քանի խորհուրդներ հոգեւոր աճիդ համար

Հոգևոր հասունությունը Հիսուս Քրիստոսին ապավինելու արդյունքն է: ***«Արդարը հավատքով է ապրելու»*** (Գաղ. 3:11):

Հավատքով լեցուն կյանքը սովորեցնում է ամեն մանրուքի և պարագայի մեջ ավելի ու ավելի վստահել Աստծուն և կիրառել հետևյալը.

1. Աղոթիր Աստծուն ամեն օր (Հովհ. 15:7),
2. Աստվածաշունչը կարդա ամեն օր, որպեսզի խորապես ճանաչես Աստծուն (Գործք. 17:11; Բ Տիմ 3:14-17),
3. Ամեն բանի մեջ հնազանդվիր Աստծուն (Հովհ. 14:21),
4. Քրիստոսի մասին վկայիր կյանքով և խոսքով (Մատթ. 4:19),
5. Ապավինիր Աստծուն կյանքի ամեն մանրուքի մեջ (Ա Պետ. 5:7),
6. Հնարավորություն տուր Սուրբ Հոգուն լցնելու քեզ Իր զորությամբ, կառավարելու քո կյանքը և Քրիստոսի վկա դարձնելու (Գաղ. 5:16, Գործք 1:8),
7. Շարունակաբար հաղորդակցվիր հավատացյալների հետ:

**THE IMPORTANCE OF THE CHURCH**

Hebrews 10:25, encourages us “*not to forsake coming together in one place*”. Several logs together in a fire burn brightly. But if you pull one log away from the fire, its flame soon goes out.

The same thing happens to us if we do not spend time with other Christians. If you are not a member of a church, do not wait for an invitation. Be bold and without wavering, decisively approach a pastor of a nearby church, where Christ is being worshipped, honored, praised and He and his Word are preached.

Do not hesitate, start just today and decide to regularly attend the worship services.

If this article has been helpful to you, please give it or read it to someone else. This way you might help another person come to know God personally.

**WANT FURTHER HELP?**

If you would like help in developing a closer relationship with Jesus Christ, please visit:

- www.hereslife.com/connect
- www.ichristianlife.com
- www.looktojesus.com
- www.growinginchrist.com
- www.basicsteps.org
- www.greatcom.org

This article is also available in many other languages from www.hereslife.com/tracts.

© 1985- 2008 Campus Crusade for Christ Australia A.C.N 002 310 796

(All the Armenian scriptures in the booklet are taken from THE HOLY EDZMIAZIN translation/publication)

AUw0701ArmEngMb.

**Եկեղեցու կարեւորությունը**

Պողոս առաքյալը եբրայեցիներին ուղղված նամակի 10:25-ում մեզ հորդորում է *«չթողնել մեկտեղ հավաքվելը»:* Վառելափայտի կույտը բոցավառ կրակ է առաջացնում, սակայն եթե դրանք առանձնացնենք, կսկսեն հանգչել:

Ճիշտ սրա նման են նաև քրիստոնյայի փոխհարաբերություններն այլ քրիստոնյաների հետ: Եթե դու որևէ եկեղեցու անդամ չես, ուրեմն մի սպասիր հրավերի: Քաջ եղիր և առանց տատանվելու, վճռականությամբ դիմիր այն մոտակա եկեղեցու հովվին, որտեղ պաշտում, պատվում, փառաբանում ու քարոզում են Քրիստոսին և նրա Խոսքը:

Մի հապաղիր, սկսիր հենց այսօր և վճռիր, որ արբերաբար հաճախելու ես պաշտամունքների:

**WANT FURTHER HELP?**

If you would like help in developing a closer relationship with Jesus Christ, please visit:

- www.hereslife.com/connect
- www.ichristianlife.com
- www.looktojesus.com
- www.growinginchrist.com
- www.basicsteps.org
- www.greatcom.org

This article is also available in many other languages from www.hereslife.com/tracts.

© 1985- 2008 Campus Crusade for Christ Australia A.C.N 002 310 796

(All the Armenian scriptures in the booklet are taken from THE HOLY EDZMIAZIN translation/publication)

AUw0701ArmEngMb.